

Թաթար-Թուրք արչաւանքները չքացուցած էին Հայկական մեղրի, ջորիներու, աղած ձուկի, գորգի կամ ուրիշ հիւսուածեղէններու շահարեր եւ տարածեալ առեւտուրը այնքան բարդաւած 9-րդ, 10-րդ եւ նոյնիսկ 11-րդ դարերուն, սակայն ատոնց տեղ Հայ վաճառակաւնութիւնը նոր կեանք եւ մեծ դարկ տուած էր համեմի, մանաւանդ հոռմ մետաքսի մեծապէս զարդացած առեւտուրին:

Գլափիխօ Սպանիացին Թիմուր Լէնկի իր այցելութեան ատեն (1403-6) կը գրէր: «Սուլթանիէ կը ներածուի Կիլան արտադրուած բոլոր մետաքսը, որ դաւառ մըն է Կասպից հարաւային ծովեզերքին երկայնքը տարածուող, ուր այս ապրանքէն (մետաքս) շատ կ'արտադրուի եւ կը դործուի: Այս Կիլանի մետաքսը Սուլթանիէէն կ'արտածուի Գամասկոս եւ Սիւլբոյ ուրիշ կողմերը, նաեւ Թուրքիա եւ Կաֆֆա (Ղրիմի մէջ) եւ դրացի երկիրները: Ասկէ զատ Սուլթանիէ կը բերուի Շամախի (Շիրվանի) մէջ շինուած բոլոր մետաքսը, ատիկա վայր մըն է ուր այս իրէն շատ կը պատրաստուի եւ պարսիկ վաճառականները հոն կ'երթան անկէ առնելու համար, նաեւ ձենովացիները եւ Վենետիկցիները»:(9) Երեք քառորդ դար վերջ, 1474-ին, Josafa Barbaro Շամախի վրայ խօսելով կ'ըսէ. «Ասիկա շատ լաւ քաղաք մըն է, ունի 4 կամ 5,000 տունի մօտ բնակչութիւն եւ կ'արտադրէ մետաքս: Կը կանգնի Մեծ Հայքի մէջ եւ բնակչութեան մեծազոյն մասը հայեր են»:(1) Իսկ խօսելով Մերտինի մասին կը վկայէ որ հոն շատ մետաքս կայ:(2) Մերտինցի Հայ վաճառականի մը պիտի հանդիպինք դար մը վերջ Վենետիկի մէջ մետաքսի զործով զբաղած:

(9) Embassy to Tamerlane, 1928, էջ 9:

(1) Travels to Tana and Persia.— London, 1873:

(2) M. Ralph Fitch Անգլիացի վաճառականը 1583-1591-ին կը գրէ. «Մուսուլէն եւ գացի Մերտին, որ Հայոց երկրին մէջ է, ուր այժմ կը բնակի Բիւրտ կոչուած ժողովուրդ մը»:(Purchas his Pilgrims—1905, Vol. X, էջ 204):

Առանց յանդգնելու Շամախը Մեծ Հայքի մէջ սեպելու, ես կրնամ անվարան ըսել, որ բացարձակ հայ մշակոյթի եւ հայ անտեսականութեան սահմաններուն մէջ կրնայ անվերապահօրէն Շիրվանի, Գանձակի եւ Թաւրիզի հետ Շամախն ալ, իսկ ժամանակին դոնէ մինչեւ ԺՆ. դար Արտեպիլին ալ այդ ոլորտին մէջ էր:(3)

Կովկասահայաստան իր Արաշով, եւ կեդրոն ունենալով Շամախը՝ արտադրեց եւ արտածեց մետաքս: Շատ կանուխէն Հայ վաճառականութիւնը Պարսկաստանի իր առեւտրական միջնաբերդը ըրած էր Թաւրիզ, այն աստիճան որ օտարները զայն Հայաստան կը նկատէին:(4) Այսպէս Արաշի, Վրաստանի կամ

(3) Իսկ Հաուզալ որոշ կը վկայէ որ Ժ. դարուն Արտեպիլի բնակիչք Հայերէն կը խօսէին:

(4) Հետաքրքրական է որ John Fryer Անգլիացի ուղեգիր բժիշկը (1672-1681) Թաւրիզի մասին կը գրէ: «Tabrez կամ Taurus Հայաստանի մէջ Արարատ լեռնէն ոչ շատ հեռու, այժմ գլխաւոր պատրիարքութեան դահատեղին, ենթակայ Թուրքերուն եւ առեւտուրի մեծազոյն վաճառանոցը այդ կողմերուն»:(Travels in East India and Persia): Թէեւ սըխալաշատ է վկայութիւնը, (Պատրիարքութիւն ըսելով Կաթողիկոսութեան կ'ակնարկուի, որ սակայն Թաւրիզի մէջ չէ, ինչպէս որ Թաւրիզ Հայաստանի մէջ չէ, սակայն ցոյց կուտայ թէ որքան հայացած էր Թաւրիզ որ կը շփոթուի իրր մաս Հայաստանի: Իրմէ դար մը առաջ Ֆրանսացի Nicholas Nichalay Daulphinois կը գրէր 1551-ին. «Գալով Պարսկաստանի արդի քաղաքներուն, գլխաւորը Թաւրիզ քաղաքն է, ուր (նկատի չառնելով Հայաստանի մէջ գտնուելը) Սօֆին (Շահը) ամենէն յաճախ կը բնակի, եւ որ ընտիր ու վաճառաշահ քաղաք մըն է ամէն տեսակ ապրանքներու, ոսկի, արծաթ, մետաքս, ու զանազան աղնիւ գոհարներ»:(Հրատ. Անգլ. T. Osborn,—London, 1745, Vol. I, էջ (61):

Հոն կային մեծ վաճառականապետեր ԺՆ. դարուն որպէս նշանաւոր Խօճա Միրաքը որ